Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Նորատուս գյուղի №1 միջն. դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Անգլերեն

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորություն

Վերապատրաստող, մենթոր՝ Լիլիթ Մուխսիկարոյան

Ուսուցիչ՝ Գոհար Հակոբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

2. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ: ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը:

Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը :

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:

1. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դասապրոցեսի ճիշտ պլանավորումով, որը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ *նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, բուն դասը և վերլուծական աշխատանք, որը պետք է կատարել դասից հետո*:

Դասից առաջ նախապատրաստական աշխատանքներ կատարելիս ուսուցիչը մտածում է դասի պլանավորման հետևյալ քայլերի մասին.

ա. Դասի նպատակների, ակնկալվող արդյունքների սահմանում:

բ. Նյութի յուրացման աստիճանը բացահայտող ապացույցներ:

գ.Դասաժամի բուն ընթացքի պլանավորում:

Յուրաքանչյուր քայլը մանրամասնորեն ներկայացնենք առանձին-առանձին:

ա. **«Դասի նպատակների, ակնկալվող արդյունքների սահմանում» -** նշանակում է, որ ուսուցիչը իր համար հստակեցնում է հետևյալը, թե ինչ ենք ցանկանում, որ աշակերտներն այս թեմայից սովորեն, որոնք են այն հիմնական հասկացություններն ու գաղափարները և չափորոշչային ինչ մակարդակ պետք է ապահովի ուսուցման գործընթացի այս փուլը: Ի՞նչ ենք ցանկանում մատուցել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով: Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք ուղղված են դասի նպատակների իրականացմանը:

բ. «**Ապացույցներ,** որոնք հաստատում են սովորողների կողմից նյութի յուրացման աստիճանը» քայլը ակնկալում է այն ուղիներն ու մեթոդական հնարները, որոնք նյութի ամբողջական յուրացման համար երաշխիք են և ապահովում են ուսուցման գործընթացի առաջընթացը:

գ. «**Ուսուցման բուն ընթացքի պլանավորում»** քայլով ուսուցիչը ընտրում է նոր նյութի մատուցման եղանակը՝ առաջնորդվելով հետևյալով. ինչպիսի՞ մեթոդական հնարների շնորհիվ կապահովվի թեմայի յուրացման բարձր աստիճանը, որը տանում է դեպի նպատակների իրականացում և գործընթացի բարելավում: Ուղղակի և բացահայտ կապ

պետք է լինի ընտրված մեթոդների, մեթոդական հնարների և հետապնդվող նպատակների միջև:

Արդյունավետ ուսուցման կարևոր պայմանը դասին հանգամանալից նախապատրաստվելն է: Սա ենթադրում է, որ ուսուցիչը ուսուցանվող թեմային մանրամասն ծանոթանա, քայլ առ քայլ պատկերացնի դասի ողջ ընթացքը և պլանավորի այն՝ համաձայն ստորև նշված յոթ կետերի:

1. Կազմակերպչական հարցեր.
2. Դասի նպատակների հաղորդում.
3. Նոր նյութի ներկայացում, ուսուցման գործընթացի կազմակերպում.
4. Սովորողների ընկալման մակարդակի ստուգում.
5. Սովորողների վերահսկվող գործողությունների կազմակերպում.
6. Ինքնուրույն աշխատանք.
7. Գնահատում և եզրափակում:

Դասին նախապատրաստվելու կարևոր մաս է կազմում նաև դասասենյակի կահավորումը՝ տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին համապատասխան: Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը, համապատասխանեցնի կահավորանքը և համոզվի՝ արդյոք օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են:

Ստորև տրվող հարցերի շուրջ մտածելով՝ ուսուցիչը կարող է ավելի հստակ գնահատել, թե որքանով է ինքը դասին պատրաստ:

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասումներն իրատեսական:
- Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ աշակերտները պատրաստ են իմ կողմից ընտրված մեթոդական վարժությունը կատարելու:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ դասի ընթացքը:
- Որքանո՞վ է այդ դասի ընթացքի պլանավորումը ժամանակի առումով իրատեսական :
- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների ձեռքբերումները, ինչ չափանիշներով:
- Առարկայի նկատմամբ ինչպիսի՞ վերաբերմունք եմ ուզում ձևավորել սովորողների մոտ:

Հետևություն. հստակ որոշել դասավանդման մեթոդը:

Բուն դասը: Սա բուն դասապրոցեսն է, որի ընթացքի արդյունավետ կազմակերպումը ուսուցչից որոշակի ջանք, եռանդ և մանկավարժական գիտելիքներ ու տաղանդ է ենթադրում: Դասի ընթացքը կարելի է բաժանել երեք մասերի՝ խթանման, կամ ակտիվացման, իմաստավորման կամ նոր գիտելիքների ձեռք բերման և կշռադատման, կամ ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլեր /ԽԻԿ/ :

Խթանման կամ ակտիվացման փուլը դասի սկզբնական մասն է: Այս փուլի հիմնական խնդիրն է խթանելու սովորողների ակտիվ մտածողությունը, կենտրոնացնելու և դասապրոցես ներգրավելու: Այս փուլին նպատակահարմար է տրամադրել մոտ 10-15 րոպե:

Խթանման փուլի հիմնական նպատակներն են.

- Խթանել աշակերտների մտածողությունը կենտրոնացնելով քննարկվելիք թեմայի շուրջ,
- Նախապատրաստել նրանց նոր թեմայի ուսումնասիրմանը: Այդ կարելի է կատարել նախորդ նյութի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր թեման հնի շարունակությունն է:
- Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները,
- Ձևավորել ձգտում գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու նկատմամբ:

Խթանման փուլում առավել նպատակահարմար են կիրառելու հետևյալ մեթոդները և մեթոդական հնարները՝ **՝մտագրոհ՝, ՝խմբավորում՝, ՝պրիզմա՝, ՝հինգ րոպեանոց ազատ շարադրանք՝, ՝m - աձև աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները՝, ՝հասկացությունների քարտեզ՝, ՝ուղղորդված ընթերցանության առաջին քայլը՝** և այլն:

Դասապրոցեսի երկրորդ մասում սովորողները ուսումնասիրում են նոր նյութը: Այն անվանում են նոր գիտելիքների ձեռք բերման, կամ պայմանականորեն՝ իմաստավորման փուլ: Այս փուլի հիմնական նպատակներից են.

- զարգացնել նոր գաղափարների նկատմամբ հետաքրքրությունը,
- ապահովել տեղեկատվության ընկալման և ինքնավերահսկման մեխանիզմը,
- շաղկապուել ունեցած և ձեռք բերած նոր տեղեկատվությունը.

Կան մի շարք մեթոդական հնարներ, որոնք նպատակահարմար են կիրառել նոր գիտելիքի ձեռք բերման փուլում: Դրանք են.

- փոխգործուն նշանների համակարգ
- m-աձև աղյուսակ
- համառոտ դասախոսություն
- քառաբաժան
- խորանարդում
- խճանկար
- ուղղորդված ընթերցանություն
- կանխագուշակման աղյուսակ
- գրառումների օրագիր
- պատկերասրահում

Դասի այս փուլին հատկացվում է ավելի շատ ժամանակ /մոտավորապես դասաժամի տևողության կեսը՝ 20-25 րոպե/, քան մյուս երկու փուլերին, քանի որ հենց այս փուլն է, որ ապահովում է ժամանակակից մեթոդների հիմնական նպատակը և գործառույթը, այն է՝ դասարանում՝ դասապրոցեսի ընթացքում դասանյութը յուրացնելը:

Դասապրոցեսի երրորդ փուլն այն է, երբ սովորողները արդեն ուսումնասիրել են նոր նյութը և անհրաժեշտ է պարզել, թե այդ օրվա դասանյութի ո՛ր մասը նրանք յուրացրին դասարանում, ասել է թե՝ անհրաժեշտ է պարզել սովորողների մնացորդային գիտելիքները: Այս փուլը պայմանականորեն անվանում են **կշռադատման** փուլ, կամ ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլ, որի համար կարելի է տրամադրել դասաժամի տևողության մեկ քառորդ մասը:

Կշռադատման, կամ ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլի նպատակներն են.

ա. սովորողները պիտի կարողանան արտահայտել նոր ստացած տեղեկատվությունները իրենց բառերով և ձևակերպումներով.

բ. պիտի կարողանան միաձուլել իրենց ունեցած գիտելիքները նոր ստացածի հետ և ամրապնդել դրանց միջև գաղափարական կապը.

գ. կարողանան ի մի բերել, արժևորել ստացած գիտելիքները, և կարևորեն

ցանկացած իրավիճակում դրանք կիրառելու հմտությունները:

Դասապրոցեսի բոլոր փուլերի համար գոյություն ունեցող մեթոդական վարժությունները բազմաթիվ ու բազմազան են: Ընտրությունը կախված է դասավանդողի հակումներից, դասի նպատակից և տրամադրված ժամանակից: Այս վարժություններից շատերը կարող են կիրառվել մեկ դասաժամի ընթացքում, սակայն մի մասի կիրառումն էլ պահանջում է երկար ժամանակահատված: Ուստի դրանցից մի քանիսը կարելի է կիրառել նաև երկու դասաժամի ընթացքում:

Դասից հետո: Դասից հետո կատարվում է հավելյալ աշխատանք: Անհրաժեշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել.

- ուսուցիչը հասա՞վ արդյոք իր առջև դրված նպատակներին,
- ի՞նչ չափով և ինչպե՞ս իրականացան նպատակներին հասնելու ակնկալիքները,
- ճի՞շտ էին արդյոք ընտրված մեթոդները,
- ժամանակի բաշխումը որքանո՞վ էր իրատեսական,
- ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպե՞ս:

Մի քանի խորհուրդ ուսուցիչներին

Փորձառու ուսուցիչներն իրենց աշխատանքի հաջողության երաշխիք են համարում մի քանի նկատառում: Տարիներ շարունակ փոխներգործուն մեթոդներով աշխատող ուսուցիչների կարծիքով հենց այս նկատառումները կիրառելու շնորհիվ են նրանք հասել առավելագույն արդյունքների:

1. Երբեք մի՛ պահանջեք, որ աշակերտներն անգիր սովորեն դասը կամ մեխանիկորեն կրկնեն ուուցչի կամ մյուսների խոսքը:

2. Օգնե՛ք, որ աշակերտները կարողանան լսել ուրիշին, հասկանան նրանց կարծիքը, կամ առարկության էությունը, կարողանան վերլուծել դրանց ուժեղ ու թույլ կողմերը:

3. Աշակերտների մեջ ձևավորեք այն համոզմունքը, որ ցանկացած տեսակետ, եթե նույնիսկ այն հակասում է մեծամասնության կարծիքին, արժանի է ուշադրության և գոյություն ունենալու իրավունքի:

4 Բացատրե՛ք աշակերտներին, որ յուրաքանչյուր մարդ ինքն է պատասխանատու իր արարքների, իր վարքի համար:

5. Մի՛ ճնշեք սովորողներին ձեր տեսակետներով, այլ թույլ տվեք, որ նրանք համարձակորեն արտահայտվեն: Իսկ դուք բացատրեք ձեր տեսակետը և նրբորեն թույլ հետևեք, որ իրենք կատարեն ընտրությունը:

6. Համբերատա՛ր եղեք աշակերտների կարծիքները լսելիս: Մի՛շտ հիշեք, որ նրանք սովորաբար դժվարությամբ են արտահայտում իրենց մտքերը, դրա համար էլ նրանց ձեր օգնությունն է անհրաժեշտ:

7.Մի՛ մոռացեք, որ բացարձակ ճշմարտություն գոյություն չունի, բայց երեխաներն էլ մեծերի նման խիստ զգայուն են սեփական կարծիքի նկատմամբ:

8.Համոզե՛ք ձեր աշակերտներին, որ նրանց վճիռներն ու որոշումները իրական են և հասանելի:

2. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

«Իսկական ժամանակակից մանկավարժը նա չէ,
ով իր սաներին նպատակամղում է մի բանի,
որին ինքն էլ արդեն հույս չունի մասնակցել, այլ նա է,
ով ապագայից է «ժամանել» նրանց ոգեշնչելու,
իր հետևից դեպի այդ ապագան տանելու,
ապագայի իդեալները նրանց սովորեցնելու համար»:
Շ. Ա. Ամոնաշվիլի

Հայաստանի Հանրապետության դպրոցներում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասն ունի մի շարք առավելություններ պարապմունքների այլ ձևերի համեմատությամբ, քանի որ այն ունի կուռ կազմակերպչական կառուցվածք, փոխադարձ ուսուցման համար ստեղծում է ավելի լայն հնարավորություններ և պայմաններ, դաստիարակում է խմբային գործունեություն և մրցակցություն, զարգացնում սովորողների ընդհանուր պահանջները և այլն: Այն մանկավարժական գործընթացի բջիջն է, սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար կիրառվող համակարգ, որի ընթացքում կիրառվում են կրթական, դաստիարակչական բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, դիդակտիկ նյութեր:

Ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր նշանակություն ունի դասի ընթացքի ճիշտ պլանավորումը: Սա ենթադրում է, որ ուսուցիչը պետք է նախապես մանրամասն և բազմակողմանիորեն ուսումնասիրի ընտրված նյութը և մոդելավորի դասի ընթացքը: Դասին ցանկալի է նախապատրաստվել, քանի որ սկզբում դժվար է տեղաբաշխել ժամանակը և ծավալը: Դասի նախապատրաստվելը ուսուցչի կողմից պետք է հենվի ծրագրի բազմակողմանի վերլուծության վրա, որտեղ հակիրճ ձևակերպված են յուրաքանչյուր դասընթացի դասավանդման նպատակներն ու խնդիրները: Դասին նախապատրաստվելու ընթացքում ուսուցիչը կազմում է դասի պլան, որտեղ ներկայացվում են դասի

կառուցվածքային տարրերը: Այնտեղ նշվում է նոր նյութի պարզաբանման կարգը, գլխավոր և երկրորդական նյութերի ծավալը, առանձնացվում կարևոր և առանցքային հասկացությունները: Կազմելով դասի պլան՝ ուսուցիչը հաշվի է առնում նաև մի կարևոր հանգամանք. այն պետք է համապատասխանի սովորողների ուժերին: Ուսուցիչը պետք է համապատասխանեցնի դասի տեսական և մեթոդական բովանդակությունը յուրաքանաչյուր դասարանի մակարդակին, հաշվի առնի, թե ինչպիսի իրավիճակներ կարող են ստեղծվել դասի ընթացքում, ինչպես ներգործել սովորողների գործունեության վրա, որոնք են նրանց հավանական հաջողությունները և այլն:

Յուրաքանչյուր դասի պլանավորում ստեղծագործական լուրջ աշխատանք է ենթադրում, որի ընթացքում ուսուցիչը գտնում, մշակում, ընտրում է այն ձևերն ու հնարները, որոնք ուղղված են դասի նպատակների իրականացմանը:

Ավանդական դիդակտիկայում ընդունված է դասին պատրաստվելու երկու փուլ՝ նախնական և անմիջական: Նախնական փուլի արդյունքը թեմատիկ պլանն է, որն իրենից ներկայացնում է տվյալ առարկայի ուսումնական նյութի գիտականորեն հիմնավորված բաշխումը ժամանակի մեջ: Դրանից հետո կատարվում է ուսումնական պլանի, մեթոդական գրականության, դասագրքի և ուսումնական ձեռնարկների ուսումնասիրությունն:

Երկրորդ փուլում ուսուցիչը անմիջականորեն պլանավորում է դասը քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

Առաջին քայլը նպատակի ձևակերպումն է. ուր ենք ուզում հասնել, ինչ ուղիով, ինչ միջոցներով: Նպատակի և դրանից բխող խնդիրների ձևակերպման հարցում ուսուցիչը պետք է օգտվի առարկայական չափորոշչային պահանջներից և ուսումնական ծրագրից: Ձևակերպված խնդիրների իրականացումից հետո աշակերտի ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները պետք է բավարարեն առարկայական չափորոշիչի պահանջներին: Բացի այս նորմատիվային պահանջներից, ուսուցիչը պետք է տեսնի նաև տվյալ դասի իրատեսական հնարավորությունները, կիրառելիությունն ու իր մեջ պարունակող դաստիարակչական տարրերը, միջառարկայական կապի տարրերը: Դասին նախա-

պատրաստվելիս ուսուցիչը ձևակերպում է դասի կրթական, դաստիարակող և զարգացնող նպատակները:

Դասի *կրթական նպատակները* ձևակերպելիս հաշվի են առնվում, թե ինչպիսի կարևոր կարողություններ են ձևավորվում դասի ընթացքում, դասի բովանդակությունից ինչը պետք է յուրացնի սովորողը, *դաստիարակչական նպատակները* ձևակերպելիս՝ թե ինչ ներդրում ունի դասը սովորողների մարդկային, հայրենասիրական, զգացմունքային և բարոյական որակների դաստիարակության հարցում, որն իրականացվում է ողջ ուսումնական գործունեության ընթացքում, իսկ *զարգացնող նպատակները* ձևակերպելիս՝ ինչպիսի հմտություններ են զարգանում նյութի ուսուցման հիման վրա:

Մանկավարժական նպատակների ոչ ճիշտ ընտրությունը դասի ժամանակ բերում է սխալների: Այդ պատճառով դասի այս երեք հիմնական նպատակներն էլ պետք է կիրառվեն ճիշտ ժամանակին:

Հաջորդ քայլը սովորողների նախագիտելիքների որոշումն է: Մատուցվող նոր նյութը հիմնվում է նախկինում ստացված գիտելիքների ու կարողությունների վրա և պետք է համապատասխանի տվյալ դասարանի ընդհանուր մակարդակին:

Նախագիտելիքների որոշումը իրականացվում է նախորդ դասերի ընթացքում դիտման մեթոդի կամ հարց ու պատասխանի միջոցով: Այնուհետև ուսուցչի կողմից կատարվում է կրթական վերջնարդյունքների ճշգրտում ինչպես ընդհանուր դասարանից, այնպես էլ ամեն մի աշակերտից:

Այս աշխատանքներից հետո ընտրվում է համապատասխան մեթոդ, դասասենյակը համապատասխանեցվում տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին: Ուսուցիչը պետք է դասավորի բոլոր այն նյութերը, որոնք օգտագործվելու են տվյալ դասին, այդ թվում նաև ուսումնական նյութերը, համոզվի, արդյոք սարքին են անհրաժեշտ տեխնիկական միջոցները և ցանցային սարքավորումները, բավարար է ծրագրային ապահովումը:

Հաջորդ քայլը գնահատման ձևի ընտրությունն է, չափանիշների ճշգրտումն ու մշակումը, ապա՝ ժամանակի բաշխումը ըստ փուլերի:

Նպատակների և խնդիրների ձևակերպումից, մեթոդների ընտրությունից և դասի տիպը որոշելուց հետո ներկայացվում է բուն դասի ընթացքը: Դասի ընթացքը կարելի է

բաժանել երեք մասերի՝ խթանման, կամ ակտիվացման, իմաստավորման կամ նոր գիտելիքների ձեռք բերման և կշռադատման, կամ ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլեր:

Խթանման կամ ակտիվացման փուլը դասի սկզբնական մասն է: Այս փուլի հիմնական խնդիրն է խթանել սովորողների ակտիվ մտածողությունը, կենտրոնացնել ուշադրությունը և նրանց ներգրավել դասապրոցեսին: Այս փուլին տրամադրվում է մոտ 10-15 րոպե:

Երկրորդ փուլում սովորողները ուսումնասիրում են նոր նյութը: Այս փուլը անվանում ենք նոր գիտելիքների ձեռքբերման՝ իմաստավորման փուլ: Դասի այս փուլին հատկացվում է ավելի շատ ժամանակ, մոտավորապես 20-25 րոպե, քանի որ հենց այս փուլն է ապահովում դասարանում՝ դասի ընթացքում դասանյութի յուրացմանը:

Երրորդ փուլը կոչվում է կշռադատման կամ ձեռք բերած գիտելիքների ամրապնդման փուլ, որի ընթացքում պարզվում է, թե այդ օրվա դասանյութի որ մասը նրանք յուրացրին դասարանում: Այս փուլին տրամադրվում է ժամանակի մեկ քառորդ մասը:

Դասապրոցեսի այս բոլոր փուլերի համար գոյություն ունեցող մեթոդական վարժությունները բազմաթիվ ու բազմազան են: Ընտրությունը կախված է դասավանդողի հակումներից, դասի նպատակից և տրամադրված ժամանակից: Այս վարժություններից շատերը կարող են կիրառվել մեկ դասաժամի ընթացքում, սակայն մի մասի կիրառումն էլ պահանջում է երկար ժամանակահատված: Ուստի դրանցից մի քանիսը կարելի է կիրառել նաև երկու դասաժամի ընթացքում:

Դասի վերջում կատարվում է դասի ամփոփում. ուսուցիչը հասա՞վ արդյոք իր առջև դրված նպատակներին, ի՞նչ չափով և ինչպե՞ս իրականացան նպատակներին հասնելու ակնկալիքները, ճի՞շտ էին արդյոք ընտրված մեթոդները, ժամանակի բաշխումը որքանո՞վ էր իրատեսական, ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպե՞ս: Այս ուղղորդիչ գործառույթը ուսուցիչը կատարում է յուրաքանչյուր դասից հետո՝ վեր հանելով իր հաջողությունները, թերությունները և ուղղումներ կատարում հետագա աշխատանքների համար:

Այս աշխատանքներին նախապատրաստվելը ուսուցչին լրացուցիչ վստահություն կներշնչի, կնպաստի դասի հարթ ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինմանը: Առաջարկվող հարցերի պատասխանները, կօգնեն ուսուցչին ավելի հստակ գնահատել դասին իր պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը:

Օրվա դասի պլան

Ամսաթիվ՝

Ուսուցիչ՝

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ Երրորդ

Դասի թեման՝ Աթաբեկ Խնկոյան. «Խոզն ու ագռավը»

Դասի կահավորումը՝ Ա. Խնկոյանի նկարը, պաստառ՝ լավ և վատ արարքների վերաբերյալ,

Նպատակները՝

Կրթական՝ աշակերտները պետք է կարողանան բացատրել առակի իմաստը և այլաբանական նշանակությունը, արտահայտիչ և հասկանալով ընթերցեն առակը,

Դաստիարակչական՝ աշակերտները պետք է կարողանան բնութագրել հերոսներին՝ վերագրելով նրանց մարդկային հատկանիշներ, վերարտադրեն առակը՝ գնահատելով հերոսների վարքագիծը և հիմնավորելով իրենց կարծիքը,

Զարգացնող՝ պետք է կարողանան բնագրին կից նկարը համեմատել առակի բովանդակության հետ, համեմատել հերոսներին, նրանց լավ և վատ արարքները:

Կիրառվող մեթոդները՝ Մտագրոհ, Վենի դիագրամ, Քառաբաժան:

Դասի ընթացքը՝ դասը անցկացվում է ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ:

Դասը սկսվում է նախապատրաստական զրույցով: Այս փուլի համար ուսուցիչը նախապես հարցեր է պատրաստում: Հարց ու պատասխանի միջոցով ուսուցիչը ներկայացնում է լավ և վատ արարքները, բացատրում, թե որ արարքներն են լավ, որոնք՝ վատ:

Նախապատրաստական զրույցից հետո աշակերտները հանելուկների միջոցով գտնում են առակի հերոսներին և նկարագրում նրանց.

Կենդանի է ընտանի՝
Շատակեր ու շատ փնթի,
Ցեխի մեջ է օրն ի բուն
Եվ կաղին է շատ սիրում:
/Խոզ/

Ո՞ր թռչունն է՝ սև, կռկռան,
Հագին ունի սև պատմուճան,
Բույն է հյուսում ծառի ճյուղին,
Ու կռավում ամբողջ տարին:
/Ագռավ/

Հետո ուսուցիչը կազմակերպում է փոքրիկ զրույց Աթաբեկ Խնկոյանի մասին:

Իմաստավորման փուլ:

Այս փուլում կատարվում է «Խոզն ու ագռավը» առակի ամբողջական ընթերցում ուսուցչի կողմից: Առաջին ընթերցման ժամանակ աշակերտները լուռ լսում են, որից հետո կատարվում է առակի ընթերցում հատված առ հատված՝ զուգահեռաբար տանելով բառային և ուղղագրական աշխատանք: Դուրս են գրվում այն բառերը, որոնք բացատրական և ուղղագրական դժվարություն են ներկայացնում: Այնուհետև տեքստը բաժանում են տրամաբանական ամբողջություն ներկայացնող հատվածների՝ ընթերցելով տեքստը շարունակելով և ընտրովի ընթերցանությամբ: Անցկացվում է քննարկում և վերլուծություն և տրամաբանական հատվածների համար ընտրվում նոր վերնագրեր: Հաջորդ քայլին բնութագրվում են կերպարները, նկարագրվում նրանց արարքները, կատարվում դատողություններ և եզրահանգումներ:

Վենի դիագրամի միջոցով նկարագրվում են առակի հերոսները՝ խոզը և ագռավը.



Այս քայլից հետո աշխատանք է տարվում արտահայտիչ ընթերցանության ուղղությամբ՝ ուշադրություն դարձնելով ուրիշի ուղղակի խոսքի կետադրության վրա:

Կշռադատման փուլ:

Բանավոր հարցադրումների, զրույցի, քննարկումների, վերլուծության և մեկնաբանության արդյունքում աշակերտները վեր են հանում առակի հիմնական իմաստը, հասկանում դրա այլաբանական նշանակությունը՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ի՞նչի մասին է առակը,
- Ո՞րն է առակի հիմնական իմաստը,
- Ի՞նչ սովորեցրեց մեզ այս առակը:

Աշակերտները խոզի և ագռավի կերպարների միջոցով ներկայացնում են նրանց լավ և վատ արարքները: Այլաբանական և բարոյախրատական իմաստների բացահայտումից հետո առակի ազդեցությունն ամրակայվում է համապատասխան խորհուրդն ունեցող ասացվածքների և դարձվածքների միջոցով:

Ամփոփում՝ Առակի ուսուցման գործընթացը ամփոփվում է քառաբաժանի մեթոդով.

Ի՞նչ տեսա անհագ, ապերախտ խոզ, խելացի ագռավ	***Ի՞նչ լսեցի*** ագռավի խորհուրդը, երախտամոռ խոզի խոսքերը
Ի՞նչ սովորեցի լինել երախտապարտ, գնահատել ունեցածը, մտածել մեր արարքների հետևանքների մասին	***Նոր վերնագիր*** Երախտամոռը Ագահ խոզը Իմաստուն ագռավը

Այսպիսով՝ արդյունավետ է այն դասը, որտեղ ուսուցիչը կիրառում է յուրաքանչյուր դասին ներհատուկ մեթոդներ, հնարներ, ձևեր, որոնք նպաստում են սովորողների գիտական գիտելիքների ընկալմանը, դրդապատճառների, հետաքրքրությունների, կարողությունների, ունակությունների, հմտությունների զարգացմանը, ճշգրիտ եզրահանգումների կատարմանը: Այսինքն՝ արդյունավետ դասը կարող է հիմնված լինել միայն փոխկապակցվածության, փոխհամագործակցության, դասի բովանդակության և նրա մեթոդիկայի փոխադարձ ամրության վրա:

Բանալի բառեր - դասի պլանավորում, դասի ընթացք, նպատակ, ամփոփում, ուսուցման մեթոդներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կցանկանանք ևս մեկ անգամ կարևորել միջառարկայական կապերի դերը սովորողների մետաճանաչողության զարգացման համար: Միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին են դարձնում այս գործընթացը, քանի որ սովորողն այդ ակտիվ միջավայրում լիարժեք կարող է բավարարել իր հետաքրքրությունները, գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները: Կարծում ենք, որ այստեղ մեծ է հատկապես ուսուցչի դերը: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, անուշտ, տեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի նաև հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը: Հավելենք նաև, որ ինտեգրված դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում,որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով: Մեծագույն համոզմունք ունենք, որ այս ուսումնասիրության արդյունքը կլինի, որ բարձնարա նաև մեր՝ ուսուցիչներիս մոտիվացիան, որպեսզի ավելի հաճախակի դիմենք միջառարկայական կապերի օգնությանը՝ նպատակ ունենալով նաև զարգացնել սովորողների մետաճանաչողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Հ. Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014:
2. Սիրունյան, Անտոնյան Ս., Վանեսյան Ս. Թեմատիկ պլանավորումն ըստ չափորոշչային պահանջների, Երևան, 2014:
3. Արնաուդյան Ա. և ուրիշներ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004:
4. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես», 2006:
5. Սարուխանյան Ս. և ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:
6. Գյուլամիրյան Ջ. Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
7. Տեր – Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
8. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե. Մայրենի 3, դասագիրք, Երևան, 2014: